


մերթ ալ խնձորներինք իրենց վայրի բնական ձեւովը կը տեսնուին։ Այս պատկերներս կը շարունակուին մինչեւ Ալտասս գիւղը, ուր կ'իջեանինք խանի մը մէջ, և կը գտնենք ոչխարի միս և մածուն։ Հոս հեռուն կը դիտենք կիսաւեր զոհակ մը, որ աւելի բերդի մը նմանութիւնը ունի։ Զանապարհիս վրայ ձմեռ գարուն ընդհանրապէս կը ճանապարհորդեն կարմրագլուի պարսիկներ իրենց ուղտերու երամակներովն, որոնք կամ Տրապիզոնէն կ'եննեն կարին և ապա Պարսկաստան և կամ Գալլիէնէն կարին և Տրապիզոն կ'իջնեն։

Այս վայրս աւելի զահավէժ է մինչեւ խորին և լայն ձորը, յորում լաւ կը նշմարուի Զուանայի միաւորութիւնը միւս լեռանց հետ։ Ասկէց կ'անցնի Գարսիդ գետակը, որոյ եզերքէն կը շարունակէ խնուղին մինչեւ Կիւմիշլիանէի մօտերը։ Քիչ մը եթէ շեղելու ըլլանք՝ կը գտնենք արծաթահանք ունեցող քաղաքս, որոյ շուրջանակի բուսաբերութիւնը հարուստ է։ Դէպ ի Բարերդ ճանապարհը լեռնադաշտ մ'է փոքրիկ ելեւէջներով մինչեւ քաղաքը, որ շրջապատուած է կիսաբլուր լեռներով, ունի հնաշէն պարիսպներ, որ ձենովացւոց գործ կը թուի։ Մէջէն կ'անցնի Ճորոխ գետը, որոյ երկու եզերքը կը բռնեն ուռնիներ։ Ասկէց մինչեւ կարին ամառուան վերջերը բոլորովին այրած և չորացած կորդ երկիր մը կ'ըլլայ։ Իսկ ձմրան տեսն խնուղույն աւելիւով՝ ուղեւորը շատ տեսակ վտանգներու կը հանդիպի. նոյն իսկ պալիսթով ճանապարհորդողը հովին ուժգնութենէն, ճամրուն անհարթութենէն վեր վար՝ աջ և ձախ որորուներով գրեթէ ոգեպառ կ'ըլլայ և շատ անգամներ նախամեծար կը համարի ոտքով ընթանալ։ — Վերջին իշավաններ են Բոնակոպան տաճիկ գիւղը, Ալիալա՝ Եփրատայ վրայ, Գարապուլուզ, Ենիխան, Իլընա և Կէզ և ապա Էրզրում։

Հոս՝ Պ. Աղզիլիդի կը հաւաքէ հնութիւններ, ինչպիսի են Արտաշէսներու, Դիոկղեսիանոսի, Յուլիանոս Ուրացողի, Մեծին Թէոփոսի, Արտաշէր Սասանեանի, Շապուհ

հի, Որմզդայ, Վառմներու, Շապուհներու, ինչպէս նաեւ արաբ Էլ Մանսուրի, Էլ-Բիշրի, Էլ Մոթագի և այլոց դրամները։ Կը շրջի քաղաքիս հնաւանդ վայրերը, կը նկարագրէ դաշտը, տները, մինչեւ անգամ խանքմ եօլու ընդարձակ արքունական ճանապարհը. և կ'աւարտէ մատենադ յիշելով եւրոպական գաղութը, որ երեկոյթներով կ'անցնեն ձմրան երկայն գիշերները՝ հնչեցնելով բարձրագոյնադին մէջ վէճրոխի, Մոզարի, Երէնի և այլ հուշակաւոր երաժշտաց եղանակները։

*
**



ՏՂՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՎԻՇՏՆԸ

« Ո՛հ, դէպ ի ետ կանչեցէք մօտս իմ եղբայր, Մինակ խաղալ չեմ կրնար։
Կու գայ ամսուն հետը ծաղկին և մեղուին,
Ո՛ր իմ եղբայրս է գացեր։
« Հոս թիթենիկը փալիքունն նըշողէ
ձանաչներովն արեւու,
Հոգ չեմ ըներ որտալ անոր թըրիչներ,
Ո՛հ, կանչեցէք իմ եղբայրս։
« Կ'անուպանան մեր սերմանած ծաղիկներ
Շուրջ մեր ծառոց պարտիզին,
Մեր տընկած որթը ծըռեր է գլխիկոր,
Ո՛հ, կանչեցէք զայն ինծի »։ —
« Նա չի լըսեր, անուշ մանկիկ, քու ծայնիդ
Նա քեզի չի կրնար գալ,
Գարնան պէս մէկ անգամ ժողտող այն երես,
Պիտ՝ չըտեսներ երկրիս վրայ։
« Վարդի մը կարճ՝ ուրախութեամբ շողուն կեանք՝
Այսպիսի տրուած էր անոր.
Գրնա՛, մինակ պէտք ես խաղալ դու որդեակ,
Երկրնքի մէջն է եղբայրդ »։ —
« Միթէ թողո՞ւ իր թըռչուններ, ծաղիկներ,
Եւ ետ ետ գո՛ր կը կանչեմ.
Եւ ամառուան ժամերէն վերջը երկայն
Նա պիտի ետ չը դառնայ »։
« Պիտ՝ չըփալե՞ք ճամբաներէն անտառի
Եւ առուակի քովերէն.
Ո՛հ, մինչդեռ ինձ հետ կը խաղար, աւելի
Եղբայրս սիրած ըլլայի » ... »

Թորգմ. Հ. Տ. Տ. ԿԻՒՆԵՆ

ՀԵՐԵՍ